




ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


“BUSINESS ARMENIA®”

Երևան 2018

	ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ԽԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ա
		Ուժի մեջ է 01.04.2018թ.-ից

Բովանդակություն

Ներածություն.....	3
Հասկացություններ.....	4
Ու՛մ նկատմամբ է սույն Կարգը ենթակա կիրառման՝.....	6
Ինչպիսի՛ գործողությունների կատարումն է արգելված սույն Կարգով.....	6
Պատասխանատվության միջոցները.....	7
Բացառություններ.....	8

	ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Խմբագրող ընկերություն
		Ուժի մեջ է 01.04.2018թ.-ից


Ներածություն

«Business Armenia®»-ի գործունեության կարևոր մաս է կազմում Հիմնադրամի Գործադիր տնօրենի, Խմբի ղեկավարների և աշխատողների գործողությունների համապատասխանությունը ինսայդերական քաղաքականության և չբացահայտված տեղեկատվության պահպանման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը: «Business Armenia®»-ն արգելում է էական չբացահայտված տեղեկատվության չլիազորված տրամադրումը երրորդ անձանց կամ այդ տեղեկատվության օգտագործումը անձնական նպատակներով:

Սույն Ինսայդերական քաղաքականության (այսուհետ նաև՝ Կարգ) խախտումները կարող են հանգեցնել «Business Armenia®»-ի (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) կողմից կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ քրեական և քաղաքացիական պատասխանատվության: Չնայած այն հանգամանքին, որ Ինսայդերական քաղաքականության խախտումների համար պատասխանատվության միջոցները հիմնականում նախատեսված են այն անձանց համար, ովքեր երրորդ անձանց անօրինական կարգով տրամադրում են տեղեկատվություն, այնուամենայնիվ իր աշխատողների կողմից կատարված գործողությունների համար «Business Armenia®»-ն կարող է ենթարկվել տուժանքի, որը ենթակա է փոխհատուցման՝ վնասը հասցրած աշխատողի կողմից: Ոչ պատշաճ գործունեության ամենաչնչին դրսևորումն անգամ ունակ է էական վնաս հասցնել «Business Armenia®»-ի հեղինակությանը, ինչպես նաև մեր հաճախորդների, գործընկերների, մատակարարների, շահառուների հետ ունեցած հարաբերություններին:

Կարևորվում է «Business Armenia®»-ի գործունեության համապատասխանությունը «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի, Հիմնադրամի կանոնադրությանը, սույն Կարգի, ներքին կարգապահական կանոնների, ինչպես նաև ՀՀ այլ օրենքներով և այլ ենթաօրենսդրական ակտերով սահմանված պահանջներին:

Եթե Դուք երբևիցե ունենաք հարցեր կապված սույն Կարգի հետ, խնդրում ենք դիմել Իրավաբանական և Համապատասխանության խմբին:

	ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Խմբագրող ը յ ու ն Ա
		Ու ժ ի մ ե ջ Է 01.04.2018թ.-ից

Հասկացություններ

Գործադիր խորհուրդ՝

Հիմնադրամի Գործադիր տնօրենի և Խմբի Ղեկավարների մասկացությամբ մարմին:


Էական տեղեկատվություն՝

- այն տեղեկատվությունը, որը ներդրողի համար կարող է հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունում կամ որոշակի ծրագրում ներդրում կատարելու մասին որոշում կայացնելիս .
- այն տեղեկատվությունը, որի տրամադրումը կարող է ցանկացած տեսակի առավելություն կամ նախապատվություն տալ տնտեսվարող սուբյեկտներին Հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետությունում կամ արտերկրում կազմակերպած կամ Հիմնադրամի կողմից մասնակցությամբ ցուցահանդեսներին, բիզնես ֆորումներին, համաժողովներին և նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցության ժամանակ .
- այն տեղեկատվությունը, որը կարող է օժանդակել որևէ անձի կամ կազմակերպության մասնակցել և/կամ հաղթել Հիմնադրամի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հայտարարված գնումների ընթացակարգերում .
- ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք համարվող տեղեկատվությունը:
- ինչպես նաև, այն տեղեկատվությունը, որը մրցակցային առավելություն կտա Հիմնադրամի հետ որևէ գործարար, տնտեսական կամ իրավական հարաբերություններ հաստատող կամ հաստատած երրորդ անձանց:

Տեղեկատվության էական լինելը որոշվում է հաշվի առնելով յուրաքանչյուր դեպքի առանձնահատկություններն ու հանգամանքները:

Ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք՝

այն տեղեկատվությունը, որը երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը, տվյալ դեպքում

	ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Խմբագրություն Ա
		Ուժի մեջ է 01.04.2018թ.-ից


«Business Armenia®»-ն միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

Չբացահայտված տեղեկատվություն՝

այն տեղեկատվությունը, որը հասանելի չէ հասարակությանը: Տեղեկատվությունը ընդհանուր առմամբ համարվում է հասանելի, երբ այն մատչելի է երրորդ անձանց զանգային լրատվության միջոցներով կամ ցանկացած այլ եղանակով:

Ընդանիքի անդամ՝

հանդիսանում է ամուսինը, համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող զավակը:

	ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Խմբագրություն Ա
		Ուժի մեջ է 01.04.2018թ.-ից

Ուժ նկատմամբ է սույն Կարգը ենթակա կիրառման՝

Սույն Կարգում ամրագրված կանոնները վերաբերում են՝

- «Business Armenia®»-ի Գործադիր խորհրդի անդամներին .
- «Business Armenia®»-ի աշխատողներին, պաշտոնական ներկայացուցիչներին, ծառայություններ մատուցող անձանց .
- «Business Armenia®»-ի Գործադիր խորհրդի անդամների, աշխատողների ընտանիքի անդամներին .
- «Business Armenia®»-ի օգտին ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց և ֆիզիկական անձ հանդիսացող պաշտոնական ներկայացուցիչների ընտանիքի անդամներին .
- «Business Armenia®»-ի օգտին ծառայություններ մատուցող իրավաբանական անձանց և իրավաբանական անձ հանդիսացող պաշտոնական ներկայացուցիչների աշխատողներին:


Կարևոր է իմանալ՝

Դուք պատասխանատվություն եք կրում Ձեր ընտանիքի անդամների, Ձեր հետ համատեղ բնակվող անձանց և Ձեր կողմից ղեկավարվող կազմակերպությունների/անձանց կողմից սույն Կարգի ցանկացած խախտման համար: Դուք պատասխանատու եք, որ վերջիններս լինեն տեղեկացված Կարգի դրույթներին և պարտավոր եք ապահովել, որպեսզի վերջիններս նախքան էական չբացահայտված տեղեկատվությունը որևէ ընկերության, արտահանողի, ներդրողի կամ երրորդ անձանց հայտնելը՝ խորհրդակցեն Ձեզ հետ:

Ինչպիսի՞ գործողությունների կատարումն է արգելված սույն Կարգով

Սույն կարգի 2-րդ կետում նշված անձինք, չեն կարող՝

- էական չբացահայտված տեղեկատվությունը տրամադրել այն անձանց կամ տնտեսվարող սուբյեկտներին:
- Օժանդակել որևէ մեկին վերոնշյալ գործողությունները կատարելիս:

	ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Խմբագրող ընկերություն
		Ուժի մեջ է 01.04.2018թ.-ից

Կարևոր է հետևալը՝

Եթե Հիմնադրամում զբաղեցրած նախկին դիրքի հետևանքով Ձեզ հայտնի է դարձել էական չբացահայտված տեղեկատվություն, ապա Դուք պարտավոր եք չբացահայտել նման տեղեկատվությունն այլ անձանց՝ նախքան հասարակության համար նրա հասանելի դառնալը: Եթե Ձեր մոտ առաջացել են հարցեր, աղյո՞ք տվյալ տեղեկատվությունը դեռևս շարունակում է մնալ էական չբացահայտված, ապա խնդրում ենք դիմել Իրավաբանական և Համապատասխանության խմբին հետագա պարզաբանումների համար:


Ակնկալվում է, որ սույն Կարգի նախորդող գլխում նշված անձինք գործեն բարեխղճորեն: Դա նշանակում է գործել սույն Կարգի և չբացահայտված տեղեկատվության պահպանման հետ կապված հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ինչպես նաև զերծ մնալ այնպիսի գործողությունների կատարումից, որոնք թեև արգելված չեն օրենքով, սակայն կարող են հանդիսանալ կանոնների խախտում: Սույն Կարգը հանդիսանում է ուղեցույց, որի օգնությամբ Դուք կկարողանաք խուսափել Ձեր, Ձեր ընտանիքի անդամների, Ձեր հետ համատեղ բնակվող անձանց և Ձեր կողմից կառավարվող կազմակերպությունների/անձանց իրավական պատասխանատվությունից:

Քանի որ ոչ մի քաղաքականություն չի կարող անդրադառնալ բոլոր հնարավոր իրավիճակներին և տալ բոլոր հարցերի պատասխանները, պարզաբանումներ ստանալու նպատակով Դուք կարող եք ցանկացած ժամանակ դիմել «**Business Armenia®**»-ի Իրավաբանական և Համապատասխանության խմբին:

Պատասխանատվության միջոցները

Սույն կարգը հանդիսանում է Հիմնադրամի գործունեության ներքին կարգապահական կանոնների բաղկացուցիչ մաս և սույն կարգի որևէ խախտում կարող է հանգել ՀՀ աշխատանքային, քաղաքական և քրեական օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության:

Սույն Կարգով նախատեսված գործողությունների պահպանման նկատմամբ քննությունն և պատասխանատվության միջոցներ կիրառելու մասին որոշումը կայացնում է Հիմնադրամի Գործադիր տնօրենը՝ հրամանով սահմանելով դեպքն ուսումնասիրող աշխատանքային խումբ:

	ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Խմբագրություն Ա
		Ուժի մեջ է 01.04.2018թ.-ից

Բացառություններ

Սույն կարգով սահմանված անձանց շրջանակից, արգելված գործողություններից, ինչպես նաև ներքին կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումներից բացառություններ կարող են սահմանվել Հիմնադրամի Գործադիր տնօրենի որոշմամբ՝ հաշվի առնելով գործի հանգամանքները և առաջնորդվելով անաչառության և արդարության սկզբունքներով: